

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Ալապստրակը ֆորս անելիս

Մեկ թաբուն գազան մեկ տեղ թռփ էլան,
Արջին բռնեցին, մեկ դուզ չոլ տարան:
Հոգին հանեցին, կաշին քերթեցին.
Ինչքան ուժ ուներ, ամենն իր քեֆին
Մեր լուսահոգի արջին քրքրեցին:
Որդիանց որտեղ՝ նալա՛թ սատանին,
Ալապստրակն էլ հենց էն հադաղին,
Ծուռ անկաջները խլշտացրած,
Արջի անկաջի ծերիցը բռնած՝
Քաշում էր, որ նա էլ իր փայն հանի:
«Ախ դու թռփալ կա՛ղ, տվին ձեն ձենի,
Մեր գազանները ու վրա թափեցին:
Դո՞ւ ինչ տեղից ես խառնվել մեր միջին,
Քեզ ֆորս անելիս՝ ախր ո՞վ ա տեսել»:—
«Տո ի՞նչ եք ասում», սկսեց խոսիլ:
«Բաս աստված չո՞ւնիք, որ չեք մտածում,
Թե ես չըլեի, դուք հեչ ձեր օրումն
Սրան կտեսնեի՞ք, որ քեֆ եք անում:
Ե՞ս չի մեշիցը սրան դուս խոկեցի,
Ու թո՛ւշ էս տափը՝ ձեր առաջն արի»:—
Լավ տեսան, որ էլ ինչպես էր փչում,

Յատուկ Պոէմ

Քեֆըներն էկավ սրա էս խոսքում:
Արջի անկաջի ծերը կտրեցին,
Ու բաժին տվին մեր Ալապստրակին:
Յավա մարդի վրա շատ ծիծաղին էլ,
Էլի նրա բաժինն չեն պակսացնել: